ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

17 մարտի 2016 թվականի **թիվ 22** քաղ. Մոսկվա

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 711 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության 6-րդ կետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 9 հավելված) եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 1-ին հավելվածի 32-րդ կետի իրագործման նպատակներով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. «Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 711 որոշման մեջ փոփոխություններ կատարել՝ հավելվածի համաձայն:

2. Սահմանել, որ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից առաջ ուժի մեջ մտած՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված՝ Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղման պարտավորության տակ պետք է հասկանալ Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղումը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

ՀԱՎԵԼՎԱԾ
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի
մարտի 17-ի թիվ 22 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 711 որոշման մեջ կատարվող

1. Անվանման մեջ «Մաքսային միության անդամ պետությունների» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության եւ դրա կիրառման կարգի» բառերով:

2. Առաջին պարբերությունը եւ 1-ին ու 2-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Հաստատել կցվող՝

Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի պատկերը.

Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի կիրառման կարգը:»:

3. 3-րդ կետում «3. Համարել» բառերը փոխարինել «2. Ճանաչել» բառերով:

4. Նշված Որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի պատկերում՝

ա) անվանման մեջ «Մաքսային միության անդամ պետությունների» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

բ) տեքստում՝

«Մաքսային միության անդամ պետությունների» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

«ԵԱՀ արտադրանքի շրջանառության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության» բառերով:

5. Նշված Որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի մասին» հիմնադրույթում՝

ա) անվանումը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի կիրառման կարգը».

բ) 1-ին բաժնի առաջին եւ երկրորդ պարբերությունները փոխարինել հետեւյալ բովանդակության պարբերությամբ՝

«Սույն Կարգը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխան, եւ դրանով սահմանվում են Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի (այսուհետ՝ շրջանառության միասնական նշան) կիրառման կանոնները, ձեւը եւ չափսերը:»

գ) 2-րդ բաժնում՝

առաջին պարբերությունում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի)» բառերով.

երկրորդ պարբերությունում «Մաքսային միության անդամ պետությունների» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

դ) 3-րդ բաժնում՝

3.1 կետում «Մաքսային միության անդամ պետությունների» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

3.2 ենթակետի առաջին պարբերությունում «ԵԱՀ արտադրանքի» բառերը հանել.

3.3 ենթակետի երկրորդ պարբերությունը «բազային չափ» բառերից առաջ լրացնել «Շրջանառության միասնական նշանի» բառերով.

ե) 4-րդ բաժինը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«4. Շրջանառության միասնական նշանի կիրառման կարգը

Արտադրողները, արտադրողի կողմից լիազորված անձինք, արտադրանք ներմուծողները (մատակարարները) իրավունք ունեն մակնշելու այն շրջանառության միասնական նշանով, եթե արտադրանքն անցել է Եվրասիական տնտեսական միության համապատասխան տեխնիկական կանոնակարգով (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով) սահմանված՝ համապատասխանության գնահատման բոլոր ընթացակարգերը Եվրասիական տնտեսական միության ցանկացած անդամ պետության տարածքում, ինչը հաստատված է Եվրասիական տնտեսական միությունում համապատասխանության գնահատման համապատասխան ձեւերի համար նախատեսված փաստաթղթերով:».

զ) 5-րդ բաժնում՝

5.2 կետում «Կողմերի շուկայում արտադրանքի» բառերը հանել.

5.3 կետում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի)» բառերով.

5.4 կետի առաջին պարբերությունում «(ԵԱՀ)» բառերը հանել.